

փէա կը վերու, կը լքնի (կյարձակուի) վըր Փախիքներուն. եռսուն ու երկուս լէ կը զարկայ, կեցկայ ու կը կապայ. ընդոնց սիլահներ յըմեն կը ժողվայ կենայ մէկ շալակ, յուր ընկեր Մանուկի պառեկը կիտայ, կը տանայ հարի Տիւկնուկ, Փախիք լէ ուր հետ ուրանց ձեռները կապուկ, Փախիք կաղաչին Խղէին, օր ուրանց յարձկայ. Խղէն ընդոնց կըսայ.

— Իմ կարճութեն ձգի ու ընդոր նշանց տուեցի, իդա հաղ գացէք. իդա Մանուկ ձմեռ կըսէր— ե լէ քղի պէս կտրիճ իմ: էդ արօժ էկանք ձեր յառէջ.

Խղէն Փախիքներուն կը թարկայ, ուրանց սիլահներ լէ ուրանց կիտայ.

Բրայիմ բէկ կեղնի Խղէի կարճութեն կըսայ կը խանչայ ուր մօտ, էդոր շատ պատիւ կենայ.

Խղէի ձէն կը լնկնի աշխար, դոր օր էրթէր կը զարղնտէն մօտէն.

Խղէն ոպանուելով կերթայ.

Մէկ օր քրդեր կիգան էգոր տուն զօնախ. մէկ հայ էդ գիշեր կը գնին պէքճի, լուսուն կիշկին օր Պէքճին սպանած ա.

Սերթան Մանձկերտու բերդ. Բրայիմ բէկին կը գանգտին թէ Խղէն էն հային սպանած ա.

Բրայիմ բէկ խախլութենով Խղէն կը բերայ օր թէ խըլ զաթ պտի տայ, կը կապայ սուննուվի, Փախիքներուն կըսայ. օր կուլուելով գոնէն կը զարկին.

Խղէն ենխտըր զուվաթով կեղնի օր սուն կը քանտայ կը վազնի Փախիքներու վրայ. հըմայ սուն գոնէն դուս չը յեղնի. Խղէն յոնի կընկնի կը մեռնի.

## 5. Ղ Ա Ձ Ի

Չկանուայ ճանապարհորդեցինք Շեռեանայ ձախ պին բռնելով. այս անգամ մեր ճանապարհն ուղղուեցաւ ընդ մէջ յարեւելից և արեւելեան հարաւոյ. և ճանապարհին ձախ կողմն մնաց Ղազի 25 տուն Սուէտանցի և Սիպիքանցի քուրդ բնակիչ ունեցող